Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության. վարչական տույժ նշանակելու մասին 20.04.2022թ. թիվ 2214485457 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<16>> 05 2022թ. 7-13- 5445 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Արամայիս Խաչատրյանի ՄԴ/26902-22 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Դրոյի փողոցի 5 շենքի 29 բնակարանի բնակիչ Արամայիս Խաչատրյանը (ծանուցման էլ.հասցե՝ aram.xachatryan.1964@mail.ru) դիմումով խնդրել է անվավեր ճանաչել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 20.04.2022թ. թիվ 2214485457 որոշումը՝ նշելով, որ տեսանյութում կանգառն արգելող նշան առկա չէ:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 20.04.2022թ. թիվ 2214485457 որոշումը ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում **իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը**, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներ են համարվում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունը այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այդ տվյալները հաստատվում են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ, վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացատրություններով, տուժողի, վկաների ցուցմունքներով, փորձագետի եզրակացությամբ, իրեղեն ապացույցներով, իրեր և փաստաթղթեր վերցնելու վերաբերյալ արձանագրությամբ, ինչպես նաև այլ փաստաթղթերով:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման համաձայն՝ 3.16, 3.20, 3.22, 3.24 և 3.26 - 3.30 նշանների ազդեցությունը տարածվում է՝ նշանի տեղադրման տեղից մինչև դրանից հետո գտնվող մոտակա խաչմերուկը, իսկ բնակավայրերում, խաչմերուկի բացակայության դեպքում, մինչև բնակավայրի վերջը: Նշանների ազդեցությունը չի ընդհատվում հետադարձի և բաժանարար գոտու խզման, ինչպես նաև ճանապարհներին մերձակա տարածքներից ելքի և դաշտային, անտառային և այլ երկրորդական ճանապարհների հատման (հարման) տեղերում, եթե դրանցից առաջ համապատասխան նշաններ տեղադրված չեն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Նույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 36-րդ մասի համաձայն՝ ճանապարհային նշանների պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:

Դիմումում նշված հանգամանքների շուրջ պարզաբանումներ տալու նպատակով քաղաքացի Արամայիս Խաչատրյանը ներկայացել է Ճանապարհային ոստիկանության վարչական բողոքների քննության բաժին, որտեղ իր գրավոր բացատրությամբ պնդել է դիմումում նշված հանգամանքները, խնդրել է քննարկել և տալ գրավոր պատասխան:

Ճանապարհային ոստիկանության ճանապարհային երթևեկության կազմակերպման և հսկողության բաժնի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Երևան քաղաքի Հր.Քոչար - Փափազյան փողոցների խաչմերուկի հատվածում՝ իրավախախտումն արձանագրված վայրում երթևեկության մասնակիցներին տեսանելի վայրում տեղադրված է 3.27՝<<Կանգառն արգելվում է>> ճանապարհային նշանը, որը առկա է եղել իրավախախտման օրվա դրությամբ: Միաժամանակ տեղեկացվել է, որ իրավախախտման վայրը գտնվում է վերը նշված ճանապարհային նշանի ազդման գոտում:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 20.04.2022թ. թիվ 2214485457 որոշման հիմքում դրված տեսանյութի լրացուցիչ ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում այն փաստը, որ <<VAZ 21070-120-21>> մակնիշի 180LU01 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը Երևան քաղաքի Հր.Քոչար - Փափազյան փողոցների խաչմերուկի հատվածում 09.04.2022թ. ժամը 11:55-ին տեղակայված է եղել ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշմամբ սահմանված՝ 3.27 <<Կանգառն արգելվում է>> ճանապարհային նշանի ազդման գոտում, ինչն անխուսափելիորեն չի կատարվել երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով, հետևաբար առկա չէ իրավական որևէ հիմք դիմումատուի արարքը նվազ նշանակություն ունեցող գնահատելու համար:

Այսպիսով, վարորդի արարքում ակնհայտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի զանցակազմը, հետևաբար նրան վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 20.04.2022թ. թիվ 2214485457 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում.
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Արամայիս Խաչատրյանին:

Ե.Կարապետյան

Կատարող Ա.Միրզոյան
Հեռ. 060838402